ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԸՆՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի ութերորդ մասի 15-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) կանոնադրության 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի, ինչպես նաև Պալատի նախագահի 03.06.2016թ. թիվ 173-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգի 4.1 կետի պահանջներով,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում մարզային համակարգողի ընտրության կապակցությամբ փաստաբանների ժողով (մարզի փաստաբանների համատեղ հավաք) հրավիրելու անհրաժեշտությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. ***2016 թվականի դեկտեմբերի 14-ին*** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի համակարգողի ընտրության համար անցկացնել Կոտայքի մարզի փաստաբանների ժողով (**այսուհետ՝ ժողով**):

2. Սահմանել, որ՝

2.1. ***թեկնածուների ինքնաառաջադրումը սկսվում է 2016 թվականի նոյեմբերի 24-ից (սույն որոշման հրապարակման օրվանից) և ավարտվում է 2016 թվականի նոյեմբերի 30-ին ժամը 18:00-ին.***

2.2. ***թեկնածուների համակարգչային հմտությունների ստուգման և գրանցման աշխատանքները կատարվում են մինչև 2016 թվականի դեկտեմբերի 5-ը (ներառյալ).***

2.3. ***քարոզչությունը սկսվում է 2016 թվականի դեկտեմբերի 8-ից և ավարտվում է 2016 թվականի դեկտեմբերի 12-ին.***

2.4. ***2016 թվականի դեկտեմբերի 13-ը համարվում է լռության օր.***

2.5. ***ժողովի քվեարկությունը սկսվում է 2016 թվականի դեկտեմբերի 14-ին ժամը 11:00-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 17:00-ին:***

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝

- իրազեկել Կոտայքի մարզի փաստաբաններին Պալատի ցուցակում գրանցված էլեկտրոնային փոստով ծանուցումն ուղարկելու և Պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքիյան փողոց 2, 4-րդ

24 նոյեմբերի 2016թ.
թիվ 470-Լ

հարկ) գտնվող համապատասխան ցուցատախտակի վրա հայտարարությունը փակցնելու միջոցով:

- սույն որոշման մասին իրազեկել մարզային խնդիրների համակարգման գծով Պալատի նախագահի տեղակալին.
- մարզային հաշվիչ հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

4. Հաստատել Կոտայքի մարզի փաստաբանների համատեղ հավաքի ծանուցման ձևը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

24 նոյեմբերի 2016թ.
թիվ 470-Լ
ք. Երևան